

Հայ Գեղարվեստի Իր Գ

121


Գրի Կոմպոզիցիոն  
Կատեգորիա

Զար

Երգ

Տրամպ

Բնույն



1 = 88



ՅԻՆԱԿԻ ՈԳԿՈՉՈՒՄ



ԴԵՅ

ԵՐԳԻ

ԱՌԱԲԵՆԱԼ

ԱՌՄՈՍՍՍՍՍՍՍ ԱՍՍՍՍՍՍՍՍՍ

ԱՆՈՒՆՆ



ՅԻՆԱՆԵՆԱԿԻՆ ԱՌԹԻԻ





Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա.  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԱՐԿԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԿԱԶՄԵՆՆԵՐԸ**  
**Արքայ Վարդապետի և Սուրբ Էջմիածնի մասին խոսող խոսքի**  
**Վերջին Կարգապետի և Սուրբ Էջմիածնի մասին խոսող խոսքի**  
**Վերջին Կարգապետի և Սուրբ Էջմիածնի մասին խոսող խոսքի**

ՔՐԻՍՏՈՍԱՆՆԵՐԻ ՍՐԻՈՑ ՈՂՋՈՒՑ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՄ ՀԱՅՐԱԳԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՍ  
ՄԵՍԻ ՏԱՆ ԿՈՒԿԿՈՑ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՑ ԱՌԱՋՆՈՑ, ՊԱՏՐԻԱՐԷՍ ՀԱՅՈՑ ՍՐԻՈՑ  
ԵՐՈՒՍԱԿԵՄԻ Տ. ԵՂԵՇԵՒ ԱՐԷՊԻՍԿՈՊՈՍՈՍ, ՊԱՏՐԻԱՐԷՍ ՀԱՅՈՑ  
ԿՈՆՍՏԱՆԿՆՈՒՊՈԼՈՑ Տ. ՕՆՈՐՋԱՑ ԱՐԷՊԻՍԿՈՊՈՍՈՍ, ՀԱՍՏՈՐԵՆ ԱՐԷՊԻՍԿՈՊՈՍՈՍ,  
ԵՊԻՍԿՈՊՈՍՈՍ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՑԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ  
ԵՐԵՍՓՈՒՆԱՆԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՇՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԳՈՑ ԵՒ ՊԱՏՏՕՆԷԼԻՑ ԵՒ  
ՍՐԵՑԵՆԱ ՀԱՄԱՑ ժՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Սոդոմոն, նախախնամութեան ընծան եղաւ՝ Սուրբ Էջմիածնին, Կոմիտաս Վարդապետ Սուրբ Էջմիածնի ընծան հանդիսացաւ՝ Հայ ժողովուրդին:

Կոմիտաս Վարդապետ բարեմորգիչն է Հայ եկեղեցական եւ ժողովրդական երաժշտութեան եւ գիտարարը, որուն գծրծը կարելի է արժեւորել միայն Մեսրոպեան չափանիշով: Հազար հինգ հարիւր տարիներ յետոյ, Կոմիտաս Վարդապետ եկաւ շարունակելու Օշականի Մեծ Վարդապետին գործը, երգի անդաստանին մէջ, վասնզի երգը՝ խօսքի շարունակութիւնն է: Կայծառակերպումը անոր:

Արդարեւ, ինչպէս Սուրբ Մեսրոպ քառսէն դուրս բերաւ եւ բիրեղեց ձայները Հայ բարբառին, եւ իր ազգին ու աշխարհին պարգեւեց կոթողը հայերէն լեզուին, այնպէս ալ Կոմիտաս Վարդապետ՝ պեղեց մաքրեց եւ

յոյս աշխարհ բերաւ կոյս աղբիւրը Հայ երգին: Եւ բազում տարիներ, անգուլ, անյոգմարեկ, միշտ նոր աւիւնով եւ ստեղծարար տեղով, այդ աղբիւրէն Հայ երգին յոյսը բաշխեց իր ժողովուրդին:

Հայ ժողովուրդը, Կոմիտասեան երգին մէջ գտաւ, մանչցաւ իր հոգին, իր ոգեկան ինքնութիւնը, Կոմիտաս Վարդապետ սկիզբ մըն է, որ վախճան չունի: Ան պիտի ապրի Հայ ժողովուրդով, Հայ ժողովուրդը պիտի ապրի իրմով: Ինչպէս երէկ, ինչպէս այսօր, այնպէս ալ յաւիտեան: Առանց Կոմիտաս Վարդապետի չկայ հարազատ հայ երաժշտութիւն: Ամէն Հայ երգի մէջ, գոնէ մտազայթ մը պէտք է շողացնել Կոմիտաս Վարդապետի հոգիէն:

Այսօր իր ժողովուրդին սրտին մէջ կ'ապրի տառապած Վարդապետը՝ Կոմիտասը ամենայն Հայոց: Այո, կենդանի է ան եւ իր երգը յաւերժ: Կը հնչէ ան վնիտ ու ազատ, նոր յոյս ու թափով, նոր ծնունդ առած, անած բազում տաղանդներով, որոնք մեր օրերուն, փառքը կը հիւսն Հայ երաժշտութեան, մինչեւ հեռաւոր փիերը ովկէաններուն:

Լսէ՛ Կոմիտաս, վարդապետ արդար, երգը ժողովուրդիս: Այդ քու երգը է, որ քեզի կուգայ: Այդ երգի թեւերով, ամբողջ ազգը Հայոց, որ ի Հայաստան եւ ի սփիւտ աշխարհի, երախտապարտ սրտով կը խոնարհի քու յիշատակիդ ու մեծ գործիդ առջեւ, քու տեսիլներով յաւիտ հաւատարիմ մնալու սրբազան ուխտով:

Այսօր, Հայրապետը Հայոց, օրհնութիւն եւ անթառամ պսակ կը բերէ քեզի՝ Սուրբ Էջմիածնինէն ծննդավայրը քու յոյս հոգիիդ:

Այս երջանիկ ու յիշարժան առիթով, Մայր Աթոռիս առընթեր, կազմուած է մեր նախագահութեան ներքոյ յորելիմական յատուկ յանձնաժողով:

«Յանցանել մրրկի եղծանի ամպարիշուն, իսկ արդարոյն խոյս տուեալ, կեցցէ յաւիտեան»: (Առակք Ժ. 25):

Մինչեւ յաւիտեանս յիշատակ նոր օրհնութեամբ եղիցի, Ամէն:



*Վարդապետ*  
ԿՈՄԻՏԱՍ ԱՐԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԵՆՆԵՐԸ



# ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՀՈՒԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ



ԱՄԵՆ. Տ. ՇՆՈՐՀՔԱՐՔ. ԳԱԼՈՒՍԵԱՆ Պատրիարք Հայոց Թուրքիոյ



սխանպուլահայութիւնը Պատրիարքարանի գլխաւորութեամբ 16 տարիներ առաջ մեծ փառաւորութեամբ յիշատակեց Կոմտիաս Վրդ.ի ծննդեան 100 ամեակը բազմաթիւ հանդէսներով: Առաջինը, որ նախատօնակի մը հանգամանքն ունէր կատարեցինք 1969 Հոկտ. 25-ին Ֆէրիդուղի եկեղեցիին մէջ, Կիրակնամուտքի ժամերգութեան յարակից, երբ երգուեցան Կոմիտաս Վրդ.ի յօրինած կրօնական եղանակները: Յաջորդ օրը տեղի ունեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ մեր ձեռամբ Պէյօղլուի Ս. Երրորդութիւն եկեղեցիի մէջ: Այդ առթիւ մենք աշխատեցանք վեր հանել անոր «բարոյական անհատականութեան գեղեցկութիւնը»: Գեղարուեստական մեծ հանդէս մը տեղի ունեցաւ նոյն թուականի Դեկտ. 17-ին, Շան Սինեմայի սրահին մէջ: Այստեղ անդրադարձ եղաւ մեծ երգահանին կեանքին ու գործին: Երգուեցան մէջընդմէջ մեներգներ ու իմբերգներ իր գործերէն: Եղան ասմունքներ եւ նուագներ, վերջաւորութեան՝ մենք ջանացինք ներքողը հիւսել Կոմիտաս Վրդ.ի հանճարին եւ իր բացառիկ ներդրումին հայ երգի եւ հայ մշակոյթի գանձարանին մէջ:



աջորդ տարի Յունուարին, Սարայ Սինեմայի սրահին մէջ տեղի ունեցաւ Կոմիտաս Երգչախումբի ՀԱՄԵՐԳԸ: Նախ յուզումով ունկնդրուեցաւ գոռ ձայնը նոյնինքն Վարդապետին, հին երգապնակի մը վրայէն, ուր ան կ'երգէր «Մոկաց Միրզէ» հին երգը: Այս փառաւոր համերգը երեքկնուեցաւ յաջորդող երկու շաբաթներուն:



սթանպուլահայ մամուլը իր էջերը լայնորէն տրամադրեց այս հանդիսութեանց նկարագրութեան եւ բանախօսութեանց տպագրման: Բաց աստի իրենք՝ եւս բացառիկ թիւեր յատկացուցին անոր կեանքին եւ գործին: Յիշատակութեան արժանի է ՄԱՐՄԱՐԱ օրաթերթի

1969 տարուան Հոկտ. 8-19 թիւերը, որոնք բացառիկ եւ մեծարժէք գրութիւններ կը պարունակէին Կոմիտասի մասին: ՇՈՂԱԿԱԹ տարեգիրքի 1970 թիւի մէջ, բացի Ա. Ճիւլիպիւնի «ԿՈՍԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԻՐԲԱՆԱՍՏԵՂԾ» արժէքաւոր եւ ընդարձակ գրութենէն, լայն տեղ տրուած էր (չուրջ 20 երկսիւնակ էջեր) մեր Պատրիարքարանի Դիւանատանմէջ պահուած Կոմիտաս Վրդ.ի մեծ ու պզտիկ նամակներուն, որոնցմէ կարեւորագոյն քանի մը հատը կը հրատարակենք այս յուշագրքոյկին մէջ:



յս բոլոր յիշատակութեանց նպատակն էր հաստատել: Թէ Իսթանպուլահայը իր սիրոյ եւ սիրտի՝ յարգանքի եւ հիացումի իր պարտականութիւնը լիովին կատարած էր 16 տարիներ առաջ: Ներկայի պայմանները թոյլատու չեն նման համայնքային հանդէսներ սարքելու նաեւ անոր մահուան յիսնամեակին առիթով, երբ մեծանուն Վարդապետը կրկին կը յիշատակուի խանդաղատանքով ու խանդավառութեամբ Հայաստանի եւ գաղթօճախներու մէջ: Մեր հիացումի եւ յարգանքի տուրքը մասամբ մը հատուցած պիտի նկատենք վերհրատարակելով իր յօրինումներէն ոմանք, զորս «ձայնքաղած» էր Կոմիտաս Վրդ. հայ ժողովուրդի բերանացի «Շարակնոց»էն եւ շրթներէն:

Մեր այս համառօտ անդրադարձը եզրակացութեան կը բերենք նոյն մտածումով բայց փոքր ինչ փոփոխութեան ենթարկուած բառերով, զոր արտայայտած էինք 16 տարիներ առաջ Կոմիտաս Վարդապետի ընծայուած յուշահանդէսի մը փակման առիթով:



ոմիտասի մեծութիւնը եւ եզական փառքը կը կայանայ այն իրողութեան մէջ, որ գրեթէ հրաշքով մը, գիտակից կամ անգիտակից ներհայեցողութեամբ մը, որուն Տաղանդ կամ Զիրք կ'ըսենք, նա յանկարծ ՆՇՄԱՐԵՑ իր ժողովուրդի ներքին ապրումներուն արտայայտութիւնը եղող ԵՐԳԻՆ մէջ՝ եւ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑ «տոհմիկ երգական հնչիւնը» որ դժբախտաբար այսօր գրեթէ կորած է անոր բնագաւառներուն մէջ: Ու վերջապէս՝ թեան կը բերենք մեր այս գրութիւնը պատգամովը նոյնինքն Կոմիտաս Վարդապետին:

«Տոհմիկ հնչիւնն ու առողանութիւնը, որ ազգային երաժշտութեան կեանքի զարկերակն է, վերականգնելու համար պէտք է նախապատրաստել երաժիշտ-դպրապետներ, հայ երաժշտական ոգիով եւ արդի բարձրագոյն երաժշտութեամբ զինուած եւ ապա շատ զգուշատր մերձենալ բազմաձայն երգեցողութեան կիրառութեան, որպէսզի չխեղդուի բնիկ ազգային հնչիւնը, առողանութիւնը, ելեւէջը, ուրեմն եւ ազգային կենսաբեր երաժշտութիւնը:

«Հրաշք կարող է անել, նոյնիսկ միաձայն երգեցողութիւն եթէ պատարագի երգերի ուրոյն բովանդակութեան համաձայն՝ մեր դպրապետները (այսինքն երաժշտապետները) հոգեւոր զգացումները որսան եւ փչելով եղանակների մէջ հաւատացեալ շունչ, առանց գոռում-գոչումի, առանց մրցումի, առանց քիմքը պարուրող գեղգեղանքների, միայն բառերի իմաստի մէջ թաղնուած համապատասխան ելեւէջները ի վեր հանեն:

«Յիրաւի բազմաձայն երգեցողութիւնն սքանչելեաց սքանչելիք է, եթէ հասակի եւ սեռի համապատասխան զգացումները ի մի ձուլելով են հնչում. Իսկ եթէ գործի գլուխ է անցել անգէտ մի երաժիշտ, կարող է միայն բազմաթիւ ձայների անմիաբան զուգահեռականութիւն առաջ բերել, որ գեղարուեստական չէ»:

*Քարոյ Լեփեւոյ.*  
ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԻՈՑ

# ԵՐԳԻ ՀԱՅ ՏԻՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԵՐԳԻ ՏԻՏԱՆ՝

## Կ Ո Մ Ի Տ Ա Ս

Անուններ կան, որոնք իրենց գործով խոր դրոշմ դրած են մեր պատմութեան վրայ, այս պարագային՝ Կոմիտաս իր որոշիչ դրոշմը դրած է հայ երգի եւ երաժշտութեան պատմութեան վրայ:

\*

Բուն անունով Սողոմոն Սողոմոնեան, ծնած է Կուտինա, 26 Սեպտեմբեր 1869-ին: Հազիւ մէկ տարեկան՝ կը կորսնցնէ մայրը, իսկ 11 տարեկանին՝ հայրը: 1881-ին, երբ 12 տարեկան էր, Կուտինայի առաջնորդը՝ Գէորգ վարդապետ Դերձակեան զայն կը բերէ Ս. Էջմիածին՝ նորակառոյց Գէորգեան ձեմարանին մէջ ուսանելու:


Կոմիտաս վարդապետ կ'ըսէ. «Ես հեռաւոր Կուտինայէն հազարաւոր մղոններ կտրելով հոս Ս. Էջմիածին եկայ, որպէսզի Հայաստանի սրտին մէջ հայ դառնամ, սովորիմ ու նախախնամութենէն Աստուծոյ ինծի յատկացուած առաքելութիւնը ի կատար ածեմ ամենայն նուիրումով ու սրբութեամբ:

... Եթէ բախտն ինծի չժպտար, ու Ս. Էջմիածին, եւ ապա իմ ազգին բարերար Աղեքսանդր Մանթաշեանի միջոցաւ Գերմանիա չգնայի, կը լինէի իմ հայրենիքում՝ Կուտինայում, շատ շատ մի կօշկակար, որովհետեւ որբիս խնամող Յարութիւն հօրեղբայրս կօշկակար էր»:

Տակաւին ուսանող, Կոմիտաս արտակարգ շնորհ կը ցուցաբերէ եկեղեցական երգեցողութեան մէջ, եւ հազիւ չորրորդ դասարան՝ կը նշանակուի Մայր Աթոռի երգչախումբի ղեկավար:



Գէորգեան ձեմարանի ուսումնական տարիներուն, երբ արեւելահայ ուսանողները ամառուան արձակուր-



Գործ՝ Փ. ԹԷՐԼԷՄԷՋԵԱՆԻ

դին տուն կը վերադառնային, Անասուրուէն եկած ուսանողները կ'ուղարկուէին Հարիճի վանք, Շիրակ, ուր Կոմիտաս այդ օրերուն կը ծանօթանայ հայ գեղջկական երգերուն ու պարերուն, որոնց ձայնագրութեան կը նուիրուի:

1890-ին կը ձեռնադրուի ասագ սարկաւագ, 1893-ին՝ արեղայ, իսկ 1895-ին՝ վարդապետ: Կը վարէ Գէորգեան Ճեմարանի երաժշտութեան ուսուցչի պաշտօնը: Նոյն տարին կը մեկնի Թիֆլիս, ուր կ'աշակերտէ Սակար Եկմալեանի: 1896-ին կը մեկնի Գերմանիա, կատարելագործելու համար իր երաժշտական ուսումը: Կը մնայ Պէրլին, մինչեւ 1899: Այդ տարուան Սեպտեմբերին կը վերադառնայ Ս. էջմիածին՝ նախկին պաշտօնին:

Նոյն տարին Գերմանիոյ մէջ կը ստեղծուի «Միջագային Երաժիշտներու Ընկերութիւն»ը, որուն հիմնադիրներէն մէկը կ'ըլլայ ինք՝ Կոմիտաս:

Գէորգեան Ճեմարանի մէջ կը հիմնէ երգչախումբ-որուն հետ կը շրջի Երեւան, Թիֆլիս եւ Պաքու: 1906-ին Փարիզի մէջ, հայ երգի մասին համերգ ու դասախօսութիւն կու տայ: Համերգներ կու տայ եւ կը դասախօսէ Հայ երգի մասին՝ Զուիցերիոյ եւ Իտալիոյ մէջ: 1910-ին, կը հաստատուի Պոլիս, որ մշակութային գործի աւելի լայն կարելիութիւններ կ'ընծայէ իրեն: Կը կազմէ «Գուսան» երգչախումբը, բաղկացած 300 հոգիէ: Այդ շրջանին, երաժշտութեան տեսական դասընթացքներ կու տայ: Իրեն կ'աշակերտին Բ. Կանաչեան, Մ. Թումաճեան, Վ. Սարգիսեան, Վ. Սրուանձտեանց եւ Հ. Սեմերճեան, որոնք յայտնի են «Կոմիտասեան հինգ սաներ» անունով:

Այս շրջանին հանդէս կու գայ հրապարակագրութեամբ հայ երգի արմատներուն, անոր ապրած հոլովոյթին, արժեւորման եւ տարրալուծման աշխատանքներով: Ելոյթներ կու տայ Գահիրէ, Աղեքսանդրիա, Իզմիր եւ այլ հայաշատ քաղաքներու մէջ: Տեսական իր աշխատանքներով՝ կը սատարէ արեւելեան ժողովուրդներու երաժշտական արուեստի զարգացման:

1914-ի զարնան, աշխարհի զանազան անկիւններէն



եկած 400 երաժիշտներու կողքին, կը մասնակցի Փարիզի մէջ գումարուող «Միջազգային Երաժիշտներու Ընկերութեան» համագումարին, ուր կը մատուցէ հետեւեայ երեք նիւթերը.

Ա.- Հայ Սագագիտութիւն,

Բ.- Հայ Գեղջուկ Երաժշտութիւն,

Գ.- Հայ Երաժշտութեան Ամանակի (Թամ), Շեշտադրութեան (րիթմ) եւ Տողաչափութեան (մեթրիք) մասին:

1915-16-ը իրեն համար կ'ըլլայ ճակատագրական թուական մը ու տարաբախտ վարդապետը կը կորսնցնէ իր հուրիւսեան ամէնէն նուրբ լարը, իր հոգեկան միութիւնը: Այդ թուականէն անդին, Փարիզեան բուժարանի մը մէջ, երկար տարիներ կ'ապրի անտարբեր ու սպառած:


Հայ ժողովուրդը իր այս մեծագոյն զաւակը կը կորսնցնէ 21 Հոկտեմբեր 1935-ին: Հուսկ ապա իր աճիւնները կը փոխադրուին Երեւան ու իրենց վերջնական հանգստարանը կը գտնեն Փանթէոնի մէջ, արժանանալով անմահութեան փառապսակին:

\*

Հայ արուեստի պատմութեան մէջ մեծ եղաւ Կոմիտասի ներդրումը: Ան եղաւ ձեւաւորողը Հայ ազգային երաժշտութեան նոր դպրոցին: Իր ստեղծագործութեամբ, ան ճամբան լայն բացաւ Հայ երաժշտութեան ապագայ զարգացման դիմաց: Ան եղաւ Հայ երաժշտական արուեստի առաջին դասական հեղինակը:

Կոմիտաս մեծ նուիրածութեամբ փարեցաւ Հայ բանահիւսութիւնը գրի առնելու գործին՝ յայտնաբերելով եւ կորուստէ փրկելով մեր ժողովրդային երգի լաւագոյն նմոյշները: Հաւաքեց աւելի քան 4000 երգ անոնց երկու երրորդը հետագային կորսուեցաւ Կոմիտասի հոգեկան հաւասարակշռութեան խախտումին հետեւանքով:

Կոմիտասի գործին մեծութիւնը ունեցաւ նաեւ միջազգային տարողութիւն: Առանձնայատուկ եւ գեղարուեստական բարձր յատկանիշ ունեցող հայ երգի



յայտնաբերումով՝ ան հարստացուց համաշխարհային ժողովրդային բանահիւսութիւնը:

Կոմիտաս իր ստեղծագործական ամբողջ տաղանդը տրամադրեց հաւաքուած Հայ ժողովրդային երգի մշակումին, մաքրագտումին ու բիւրեղացումին:

Իրմէ առաջ, շատեր կը պնդէին, թէ հայութիւնը ազգային երաժշտութիւն չունի, թէ Հայ երգը կը նմանի եւրոպականին, թրքականին, քրտականին, եւայլն: Ան եկաւ ապացուցելու, թէ Հայ երգն ու երաժշտութիւնը ինքնուրոյն են, թէ անոնք հայ ժողովուրդի ապրումներուն ու խոռվքներուն հարազատ արտայայտութիւնն են, հայ ժողովուրդի հարազատ ծնունդը, որ մեզի կու գայ տասնեակ դարերու ընդմէջէն:

«Այսպիսով մեր շինականի երգերը՝ աշխատանքի, բնութեան, սիրոյ, ուրախութեան եւ տխրութեան, նա բիւրեղացրեց, բարձրացրեց, եւ որպէս ազգային



մեծարժէք գանձ դրեց մեր ժողովրդի հոյակապ գանձերի՝ ճարտարապետութեան կողքին»:

Կոմիտասի հաւաքած ու բիւրեղացուցած երգերը կարելի է դասել ազգային-հայրենասիրական, դիւ-ցազնական, աշխատանքի, ծիսական, ժողովրդային վշտի, հոգեւոր եւ պարային թեմաներուն մէջ: Անոր հաւաքած երգերը կը պատկանին հաւասարապէս հեթանոսական, քրիստոնէութեան տարածման, միջնա-դարեան եւ վերածնունդի շրջաններուն:

- «Կոմիտասեան Երգը թիթիմոր հանգիսացաւ մեր երաժշտութեան, մեր ամբողջ հոգեմշակոյթի եւ առաջին հերթին մեր գրականութեան համար»:

Կոմիտաս եղաւ նաեւ Հայ երաժշտութեան մեծ տեսարանը՝ իր յօդուածներով, ան յայտնագործեց Հայ

երգի իւրայատկութիւնն ու ինքնատպութիւնը եւ սատարեց անոր գիտական ուսումնասիրութեան ու զարգացման:

Ստեղծագործական իր կարճ կեանքին ընթացքին, ան յայտնաբերեց ու մշակեց աւելի քան չորս հազար ժողովրդային երգ, գրեց 80 խմբերգներ, 40 մեներգ-ներ, դաշնամուրային 6 պար, Պատարագը, Տէր Ողորմեան եւ հոգեւոր այլ երգեր: Ստեղծագործեց, «Անուշ»էն հատուածներ մշակեց, նաեւ՝ քրտական յայտնի «Լէյլի Միջ Նաս», «Մամալին», «Ղանթէլի Սիւփուշ» եւ այլ երգեր:

Անոր սկսած «Անուշ»էն, «Սասմայ Ծոեր»էն եւ «Վարդան» օփերայէն բեկորներ միայն հասած են մեզի:

## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԵՔ ՆԱՄԱԿՆԵՐԸ

**Կ**ոմիտաս Վրդ.ի երեք նամակները որոնք երաժշտական խնդիրներու կը վերաբերին, խիստ շահեկան են: Ասոնցմէ առաջինը 9 Յունուար 1909-ին կրկին Ս. Էջմիածնայ մէջ գրի առնուած եւ ուղղուած է Իզմիրլեան Պատրիարքի: Կը կրէ Պատրիարքարանի Արձանագրութեան Դիւանին 26 Յունուար 1909 թուականը եւ 845 թուահամարը:

Կոմիտաս Վրդ.ի սոյն նամակը Կրօնական Ժողովի 29 Նոյ. 1908 թուակիր գրութեան պատասխանն է եւ կը շօշափէ իր ձայնագրած պատարագին երգեցողութիւնները: Իզմիրլեան Պատրիարքի 26 Յունուար 1909 թուակիր մակագրութեամբ նամակը յղուած է Կրօնական Ժողովին: Պատճէնը հետեւեալն է.

Ամենապատիւ

Պատրիարքի Կ. Պոլսոյ

Տ. Մատթէոս Արքեպիսկոպոսի Իզմիրլեան

Ամենապատիւ

Բարձր. Սրբազան Հայր,

Ստացայ եւ սրտիս անպատմելի եւ ուրախ յուզումով կարդացի Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովի համար 56, 1908, 29ԺԱ Հայ Երաժշտութիւնը պայծառացնելու գովելի նախանձախնդրութեան եռանդով տոգորուած յանձնարարագիրը: Սեպուի պարտքս եմ համարում անմիջապէս պատասխանել:

Ա.- Էջմիածնի մէջ երգուող արդի պատարագի իմ սրբագրած եղանակները տակաւին անտիպ են: Կ'արտագրեմ եւ կարելոյն չափ շուտով կ'ուղարկեմ մէկ

օրինակ նայ՝ եւ միւսը եւրոպացի նիշերով գրուած: Ուղարկելիքս է պատարագի միաձայն երգեցողութեան միայն սրբագրուած կտորները:

Բ.- Երկձայն պատարագ չեմ գրել: Աչֆի առջ ունենալով պատարագի երգեցողութեան այլազան բովանդակութիւնը չէ կարելի միապաղաղ՝ սկզբից մինչեւ վերջ միայն երկձայն կամ եռաձայն, քառաձայն, հնգաձայն եւ այլն գրել, այլ ըստ պահանջման երաժշտական փիլիսոփայական եւ գեղագիտական օրէնքներին՝ պէտք է լինի ըստ տեղույն մէկ, երկ, եռ, քառ, հինգ, վեց եւ այլ ձայնով դաշնակուած: Ուստի իմ կազմած բազմաձայն պատարագը միանգամայն անյարմար է Կ. Պոլսոյ եւ ազդեցութեան տակ ընկած վայրերի համար:

Նախ՝ անհրաժեշտ է վերականգնել ազգային երգական հնչիւնը, որ Տանկաստանի հայաբնակ քաղաքների եւ նոյնիսկ նոցա յարակից գիւղերի մէջ՝ ըստ մեծի մասին կորած է. բացառապէս սնունդ են առնում մի այնպիսի հնչիւնից, որ օտար-մեղկ է գուրկ հոգեւոր յստակ ջերմութիւնից ընդհակառակը՝ թմրեցնող եւ աւելի գուարնացնող է, քան ջերմեռանդութիւն եւ աղօթքի տրամադրութիւն առաջ քերող:

Երկրորդ՝ ազգային հնչիւնն ու առողանութիւնը, որ ազգային երաժշտութեան կեանքի գարկերակն է, վերականգնելու համար պէտք է նախապատրաստել երաժիշտ-դպրապետներ, Հայ երաժշտական ոգով եւ արդի բարձրագոյն երաժշտութեամբ զինուած եւ ապա շատ գգուշաւոր մերձենալ բազմաձայն երգեցողութեան կիրառութեան, որպէսզի չը խեղդուի բնիկ ազգային

հնչիւնը, առոգանութիւնը, ելիւէջը, ուրեմն եւ ազգային կենսաբեր երաժշտութիւնը:

Հրաշք կարող է անէ, նոյնիսկ միաձայն երգեցողութիւնը, եթէ՝ պատարագի երգերի ուրոյն բովանդակութեան համաձայն մեր դպրապետները հոգեւոր զգացումները որսան եւ փչելով եղանակների ելիւէջների մէջ հաւատացեալ շունչ, առանց գոռում-գոչումի, առանց մրցումի, առանց քիմքը պարուրող գեղգեղանքների, միայն բառերի իմաստին մէջ թագնուած համապատասխան՝ ելիւէջները ի վեր հանեն:

Յիրաւի բազմաձայն երգեցողութիւնն սքանչելիաց սքանչելիք է, եթէ հասակի ու սեռի համապատասխան զգացումները ի մի ձուլուելով են հնչում, իսկ եթէ գործի գլուխ է անցել անգէտ, նոյնիսկ գողտր երգուած դէպքում, կարող է միայն բազմաթիւ ձայների անմիաբան զուգահեռականութիւն առաջ բերել, որ գեղարուեստական չէ:

Մատչելով ի համրոյր Ամենապատիւ Բարձր Սրբազնութեանդ Ս. Աշոյց մնամ խոնարհ Մառայ եւ բոլորանուէր որդի  
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

1909. 9 Ա  
Ս. Էջմիածին

Սոյն նամակին, Պատրիարքարանի Արձ. Դիւանին մակագրութեանը տակ, կը գտնուի Կրօնական Ժողովի 29 Յունուար 1909 թուակիր հետեւեալ որոշումը, որ կը պատկանի նաեւ առաջինին յաւելուածը եղող յաջորդ նամակին:

«Ժողովը Յունուար 27-ի նիստին մէջ որոշեց շնորհակալութեան գիր մը ուղղել Տ. Կոմիտաս Վարդ.ի իր զգացմանց եւ աշխատասիրական մեծ ջանքերուն համար, ի բարեկարգութիւն Հայ. Եկեղեցւոյ երաժշտութեան, նոյն ատեն իմացնել Տ. Կոմիտաս Վարդ.ի թէ Կեսարիոյ Ս. Դանիէլի վանքի ձեռագրերու մէջ Տ. Տրդատ Ս. Եպս.ի ասկէ 14 տարի առաջ գտած հայ

խազարանութեան կանոնագիրքի մը պատճէնը պիտի ղրկուի. միւս կողմէ պատշաճ դատեց իր պատրաստած ու տպած Հայ ձայնագրութեան դասագիրքէն օրինակ մը ղրկել:

Ժողովս հարկ տեսաւ նաեւ գրել Կեսարիոյ Ս. Առաջնորդին որ Տ. Կոմիտաս Վարդ.ի խնդրած ձեռագրերին պատճէնը կամ լուսանկարը փութով ղրկէ Ս. Էջմիածին նոյն Վարդապետին:

ԱՏԵՆԱԴՊԻՐ  
ԳՆԷԼ Ծ. ՎՐԴ

ԱՏԵՆԱՊԵՏ  
Ղ. Ե. Դ

(Ղեւոնդ Եպսկ. Դուրեան)

27 Յուն. 1909

Յաջորդ նամակը կրնանք նախորդին շարունակութիւնը նկատել: Կը կրէ նոյն թուականը եւ Արձ. Դիւանին 844 թուահամարը: Ներկայս ալ Իզմիրեան Պատրիարքի 26 Յունուար 1909 թուակիր մակագրութեամբ յղուած է Կրօնական Ժողովին: Պարունակութեանը մէջ բազմաձուլութեամբ Երաժշտագէտը հայկական հին ձայնանիշերուն շուրջ իր կատարած ուսումնասիրութիւններուն անդրադառնալէ ետք, իր գիտութիւնը կատարելագործելու համար կը խնդրէ որպէսզի իր տրամադրութեան տակ ղրուի Կեսարիոյ Ս. Դանիէլ վանքը գտնուող հայկ. խազարանութեան վերաբերեալ կանոնագիրքը: Պատճէնը հետեւեալն է.

Ամենապատիւ  
Բարձր Սրբազան Հայր,  
Տ. Մատթէոս Արքեպիսկոպոս Իզմիրլեան  
Պատրիարք Կ. Պոլսոյ

Ամենապատիւ Տէր,

Առթից օգտուելով համարձակութիւն եմ առնում մի կարեւոր խնդիր անելու:

Պաշտօնական պատասխանագրիս մէջ յիշուած՝ պա-

տարագի սրբագրուած երգերը մեծ մասով յոյն, տանիկ, պարսիկ եւ արաբ խառնաշփոթ եղանակներով են կազմուած. ես ջանացի եղածը հնարաւոր չափով յարմարեցնելու մեր լեզուի առողջութեան օրէնքներին: Բայց, որքան էլ յաջողեցայ մի ընդհանուր կապ հաստատել, այն այնուհետեւ օտար են եւ մուրացածոյ, նոցա շարժած զգացումները չեն համապատասխանում մեր սրտի սեփական յուզումներին:

Որպէսզի կարողանամ իմովսանն օժանդակած լինել բնիկ ազգային երաժշտութեան հիմնաւոր հաստատութեան, նախ՝ սկսայ շատ մանուկ հասակիցս հետեւելու ժողովել եւ գրի առնել հայ հոգեւոր եւ աշխարհիկ-գեղջուկ եղանակները: Երկրորդ՝ Ս. Էջմիածնի, Վեներտիկի, Բերլինի, Փարիզի Հայ ձեռագրերը պրպտելով հանեցի եւ ի մի ժողովեցի բոլոր հին հայ երաժշտութեան խազարանութեան վերաբերեալ կանոններն ու օրէնքները եւ կազմեցի մի երաժշտարան-դասագիրք: Թէեւ ջուրն իր քանապարհն է գտել, սակայն դեռ պակասում են ինչ ինչ կարեւոր տուեալներ:

Արդ, Ամենապատիւ Տէր իմ, Կեսարիոյ Ս. Դանիէլ Վանքի ձեռագրերի մէջ Տրդատ Սրբազան Պապեան գտել էր ուղիղ 14 տարի առաջ մի կանոնագիրք հայ խազարանութեան մասին: Անմիջապէս դիմեցի եւ խնդրեցի, որ՝ կամ ուղարկէ, կամ արտագրել տայ եւ կամ լուսանկարել տայ իմ հաշուին: Սակայն ի գարմանս ստացայ մի գիր, որով առաջարկում էր ինձ վճարել 300 ոտրլի եւ ձեռք բերել այդ նորագիւտ ձեռագիրն՝ իր սեփականութիւն: Ես ի վիճակի չէի մի այդպիսի ապօրէն գործ կատարելու, ուստի, մինչեւ օրս, ուղիղ 14 տարուան ընթացքում արածս բոլոր յուսադրող դիմումներն ապարդիւն անցան՝ այդ ձեռագիրը ձեռք բերելու եւ ուսումնասիրելու համար: Ոչ ոք չհասկացաւ այն դառն կսկիծը, որ ես զգացի: Դիմեցի նոյնիսկ հանգուցեալ Հայրապետին, բայց անտարբերութեամբ վարձատրուեցայ:

Կատարելապէս վստահ Ձերդ տիրութեան վրայ, խնդրում եմ, հրամանագրել տաք, որ այդ ձեռագիրն ուղարկուի ինձ՝ գոնէ արտագրելու համար:

Միակ ցանկութիւնս եւ բուռն փափագս է՝ բանալ այն վարագոյրը, որով ծածկուած են մեր հին եւ բնիկ եղանակները՝ մեր սրտի եւ հոգու առաջ:

Երբ այդ ձեռագիրն անցնէ ձեռս, ունեցածս օրէնքների վերայ անշուշտ անլուսալու են նորերը, որոնք անլի դիւրութիւն են ընձեռելու ինձ օր առաջ հրապարակ հանելու մեր երկնային մաքուր եղանակները: Մեր եղանակների գիւտը համաշխարհային երաժշտութեան համար մեծ նշանակութիւն ունի:

Յոյս է եռում, որ Ձերդ Ամենապատուութեան հօգը Ձայնը վերջակէտ պիտի դնէ այս տխուր անլուր իրականութեանը:

Ներողութիւն հայցելով Ձերդ Բարձր Սրբազնութիւնից պատեառածս ներողութեան համար, գալիս եմ կրկին խնդրելու, որ Ձեր բազմազարդ կեանքի մի վայրկեանն էլ հանէք ինձ շնորհելու:

Մատչելով խորին ակնածութեամբ ի համբոյր Սրբազան Աջոյ մնամ

Ձերումդ Ամենապատուութեան  
խոնարհ ծառայ եւ անձնուէր որդի  
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

1909 9 Ա.  
Ս. Էջմիածին

*Երրորդը որ կը կրէ 19 Մարտ 1909 թուականը, նոյնպէս գրի առնուած է Ս. Էջմիածնէն եւ ուղղուած է պատրիարքական Տեղապահ Արշարունի Սրբազանի՝ որուն 3 Ապրիլ 1909 թուակիր մակագրութեամբը յղուած է Կրօնական Ժողովին: Պատրիարքարանի Արձ. Դիւանին թուականն է՝ 3 Ապրիլ 1909, իսկ թուահամարը՝ 3369:*

*Սոյն նամակին մէջ Կոմիտաս Վրդ. կ'անդրադառնայ իր նախապէս՝ կատարած խոստումին եւ կը յայտնէ թէ՝ 16 տարուան աշխատանքէ մը ետք կարողացած է հայկական խազերուն հիմնական բանալին գտնել: Այս առթիւ նշենք, որ հոգելոյս Հ. Մկրտիչ Վրդ. Պօտուրեան (1881-1959), հմուտ երաժշտագէտ հոգե-*

1015 Տ. Աբրահամ Ա. ՔՀՆյ. Էպէեանի (1869-1958)  
Կենսագրութեանը մէջ (\*) կ'ըսէ թէ՛՝ վերջինս Կոմիտաս  
Վրդ. ի այս յայտնութեան դէմ պատասխան մը տուած է  
«Տաճար»ի մէջ, սակայն առանց յիշելու թուականը:  
Նամակին պատճէնը հետեւեալն է.

Բարձր Գերաշնորհ  
Տ. Յովհաննէս Արշարունի Սրբազան Եպիսկ.  
Պատրիարքական Տեղապահ Հայոց Կ. Պոլսոյ

Սրբազան Հայր,

Ըստ յանձնարարութեան Ազգային Կեդրոնական  
Վարչութեան Կրօնական Ժողովի (համար 56 1908, 29  
ԺԱ) խոստացել էի ընդօրինակել մի մի օրինակ հայ եւ  
Եւրոպացի նիշերով մեր Ս. Պատարագի միաձայն այն  
երգեցողութեանն, որ գործ է ածուում Մայր Աթոռ Ս.  
Էջմիածնում: Արդէն մաքուրը պատրաստ էր հայ  
նիշերով ամբողջապէս եւ Եւրոպացի՝ մասամբ, երբ 16  
տարուան աշխատանքս պտուղ տուաւ, գտայ մեր հին  
խագերի հիմնական բանալին եւ սկսայ կարդալ պարզ  
խագերով գրուածները:

Արդ, պիտի խնդրեմ, որ մի առժամանակ կրկին  
շարունակուի սովորական եղած երգեցողութիւնը եւ  
երբ բոլորովին հրապարակելու մեր հանձնարեղ  
նախնեաց հոգեբուղիս երաժշտութիւնը, այն ժամանակ  
աւելի յարմար է մի ընդհանուր պատուագիր յղել հայ  
եկեղեցիներին, որ մեր անձնուրաց նախնեաց հօր  
արիւնով շողախուած սուրբ տաճարների հաստահիմն  
կամարների տակ թող վերստին հնչեցնեն մեր պարզ ու  
վսեմ ազգային եղանակները:

Զերումդ Բարձր Գերաշնորհութեան

խ. ծ. եւ որդի  
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

1909. 19 Գ.  
Ս. Էջմիածին

(\*) «Հայ Հանրագիտակ», Պուրբէ, 1938, էջ՝ 821

Յ. Գ.- Կեսարիոյ Ս. Դանիէլ Վանքի երաժշտական  
ձեռագրի մասին ցարդ տեղեկութիւն չունիմ: Խագերի  
լրիւ ուսումնասիրութիւնը փութացնելու համար արդ  
կարելի է ամէն, նոյնիսկ չնչին տեղեկութիւն: Եթէ  
ցարդ ընդօրինակած չեն, կը խնդրէի, որ ձեռագիրն  
ուղարկուէր ինձ եւ արտադրելուց յետոյ անմիջապէս կը  
վերադարձնէի: Կարող են, գործին անձանօք մարդիկ  
նման խագերը շփոթել ծուռ եւ սխալ արտագրել, որով  
գործն աւելի կը դժուարանայ ուսումնասիրութեան  
միջոցին: Նորից պիտի խնդրեմ, որ այս խիստ կարեւոր  
գործին դրական ընթացք տրուի:

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ.

Սոյն նամակին ետին ալ կայ, Կրօնական Ժողովին 22  
Ապրիլ թուակիր հետեւեալ որոշումը, որմէ յայտնի կը  
դառնայ թէ՛՝ ձեռագիրը դեռ չէ ստացուած: Յառաջիկա-  
յին ստացուելով Կոմիտաս Վրդ. ի ղրկուած ըլլալն ալ  
անձանօթ կը մնայ: Կ'արժէ գիտնալ թէ՛՝ ինչ եղած է այս  
կարեւոր ձեռագիրն ճակատագիրը:

Ժողովս Ապրիլ 21-ի նիստին որոշեց  
կրկին անգամ գրել Տ. Տրդատ Եպս. ին որ  
յիշեալ ձեռագիրը դրկէ փութով: Զայս  
հաղորդել Տ. Կոմիտաս Վարդապետին:

22 Ապրիլ  
Ատենադպիր  
ԳՆԷԼ Ծ. ՎՐԴ.

Ատենապետ  
Ղ. Ե. Գ.



## ՕՏԱՐՆԵՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

1914 թուականին Փարիզի երաժշտական «գոնկրէս» ին մէջ, ուր հաւաքուած էին աշխարհի գլխաւոր երաժշտագէտները, Կոմիտաս Հայ ժողովրդական եւ հոգեւոր երգերէ բաղկացած համերգ մը տուաւ՝ հիացնելով ներկայ եղող երգահանները:

Ժողովրդական երաժշտութիւնը, ինչպէս արօրի, խոփի, գութանի երգերու մասին տուած անոր դասախօսութիւնները պէտք է ըսել, թէ համագումարի նիստերէն ամէնէն աւելի թանկագինը եղան:

Երբ Կոմիտասը դաշնամուրի մօտ նստեցաւ մեղմօօրէն երգելու հայկական երգեր, ունկնդիր հասարակութիւնը քարացած մնացեր էր լուռ, եւ այնտեղ տիրեց այն վեհապանծ հմայքը, այն գերագոյն պարզութիւնը, որ կը բխի հայկական երաժշտութենէն:

### ՖՐԵՏԵՐԻԿ ՄԱԿԼԷՐ

(Սորպոնի-Համալսարանի փրոֆեսօր)

Ես երաժշտական վերլուծման ենթարկել եմ Կոմիտասի ստեղծագործութիւնները եւ եկեր եմ այն եզրակացութեան, որ Կոմիտասը հռչակաւոր արուեստագէտ է: Ոչ միայն հայերը, այլ ողջ երաժշտական աշխարհը կրնայ հպարտութեամբ արտասանել այդ անունը:

ՓՐՈՅ. ԼԱԽ

Թիֆլիսի մէջ ծանօթացայ ոչ միայն Հայ երգիչներու եւ երաժիշտներու, այլեւ՝ Հայ ժողովրդական երաժշտութեան: Նոյնպէս հիացումով ծանօթացայ կատարուած գործին Կոմիտաս Վարդապետի, որ ո՛չ

միայն Հայ, այլ միջազգային երաժշտութեան մեծ վարպետներէն մէկն է: Վարդապետը Հայ երաժշտութեան հայրն է, հայոց Կրիկը: Այս համոզումս պատճառ դարձաւ որ ուշադրութեամբ ուսումնասիրեմ անոր աշխատութիւնները... Նպատակս է հոս թէ եւրոպա ճանչցնել երաժշտութեան մեծ վարպետը եւ հայ երաժշտութիւնը, որ կամուրջ մըն է եւրոպականին եւ արեւելեանին միջեւ:

ՓՐՈՅ. ՀԱՐՏՄԱՆ

Եթէ Կոմիտասը գրէր միայն «Անտունի»ն, այդ ալ բաւական պիտի ըլլար զինք մեծ արուեստագէտ համարելու:

ՏԷՊԻՍԻ

1899 թուականին Պերլինի միջազգային ընկերութեան սրահին մէջ, Կոմիտասի կարդացած դասախօսութիւնը՝ Հայ հոգեւոր եւ ժողովրդական երաժշտութեան մասին, պիտի մնայ անմոռանալի: Առաջին անգամն է, որ Պերլինի մէջ այդպիսի դասախօսութիւն մը կը կարդացուի եւ գուցէ ցարդ Փարիզի միջազգային բեմերէն անգամ նման դասախօսութիւն չէ լսուած:

ՓՐՈՅ. ՕՍԿԱՐ ՖԼԱՅՇԷՐ

Կը զարմանամ Կոմիտասի արտակարգ ընդունակութիւններուն վրայ: Շատ լաւ իմանալով ժողովրդական

երգը, ան այդ երգերը ներդաշնակած է հազուադիւս  
ճաշակով եւ ճշդօրէն: Բոլոր այն երգերը, զորս ես  
անձամբ լսած եմ Կոմիտասէն եւ կամ ուսումնասիրած,  
ամէնէն առաջ, ես կը հաստատեմ, թէ Կոմիտասը եզակի  
դէմք է թէ՛ իբրեւ ներդաշնակող եւ թէ՛ իբրեւ  
բազմաձայնող:

ՎԷԼԷՇ ԷԳՈՆ  
(Վիեննայի Համալսարանի դասախօս)

Ոչ ոք չափազանցութեան մեղադրանքը պիտի ընէ  
ինծի, եթէ ըսեմ թէ այս նուագահանդէսը յայտնութիւն  
մը եւ զմայլանք մը եղաւ: Մեզմէ ոչ մէկը կրնար մտքէն  
անցընել գեղեցկութիւններն այդ արուեստին, որ  
իսկապէս ո'չ եւրոպական է ոչ արեւելեան, այլ ունի  
նկարագիր մը՝ աշխարհի մէջ մէկ հատիկ՝ շնորհալի  
քաղցրութեան, խորաթափանց յուզման եւ ազնիւ  
գորովի: Եղանակները փափուկ եւ սակայն որոշ  
թաւալումներով, ճկուն եւ կենդանի կշռոյթներ, երա-  
ժշտութիւն մը, որ ամբողջապէս սրտէ կը բխի եւ կը  
հոսի ինչպէս ջուր մը զով, թափանցիկ եւ պայծառ:  
Արեւ կայ այդ երգերուն մէջ, բայց ոչ լափող արեւը  
Արարիոյ եւ Պարսկաստանի անապատներուն լոյս մը  
ոսկեգօծ համակ երկնային, որուն ջերմութիւնը փայ-  
փայանքն մըն է սարերու սպիտակութեանը, անտառ-  
ներու կանաչութեամբ եւ կարկաչող առուակներու  
ցոլքերուն... Հայաստան ընտրեալ աշխարհ մըն է  
արդարեւ, ուր բեղմնաւոր եւ բարեացակամ բնութիւնը  
իր բարիքները կը շոյլէ մարդուն...

### ԼՈՒԻ ԼԱԼՈՒԱ

Այս հայ հոգեւորականը տարիներու տքնաջան  
աշխատութեան եւ իր պրպտող մտքին շնորհիւ հայ  
երգին եւ հայ երաժշտութեան նոր թոհիչք տուած է:  
Անատուրի գաւակ Կոմիտաս Վարդապետ, - հակառակ  
իր աստուածաբանական եւ համալսարանական կրթու-  
թեան, - արհամարհելով պերճանք, ճոխութիւն եւ  
պաշտօն, նետուեցաւ հայ գիւղերը եւ հայ գեղջուկի  
հոգեկան ներշնչումներուն իրական արտայայտու-

## Կ Ո Մ Ի Տ Ա Ս

Արեւ կայ  
Իր երգերուն մէջ հողն եփող արեւ կայ  
Արեւ կայ սիրո՞ տաքցնող  
Ու կարօտով սիրտերն այրող արեւ կայ

Տերեւ կայ  
Իր երգերուն մէջ բողբոջուն տերեւ կայ  
Տերեւ կայ շոգ ամառներէն վերապրող  
Ու աշնան հետ ոսկի դարձած տերեւ կայ

Անձրեւ կայ  
Իր երգերուն մէջ գարնան շաղ անձրեւ կայ  
Անձրեւ կայ սիրտը թրջող  
Ու կարօտներն ի սպառ մարող անձրեւ կայ

Բարեւ կայ  
Իր երգերուն մէջ համասփիւռ բարեւ կայ  
Բարեւ կայ մեր գութաներգէն հարսներգէն  
Պաղատելիւն սիրող մարդոց բարեւ կայ

1969

ՋԱՀՐԱՏ

Թիւնն եղող հայ երգը մէկիկ-մէկիկ դասաւորեց եւ  
անոնց այնպիսի կենդանի շունչ եւ ներդաշնակութիւն  
տուաւ, որ այսօր հայ երգը հայ մշակոյթի  
ներկայանալի գանձերէն մէկը կը հանդիսանայ:  
Հայրենակիցներ, մենք՝ թուրքերս ալ ունինք բարձ-  
րաստիճան իւլեմաներ, որոնցմէ շատերը մետրիւէ-  
ներու մեղկ եւ ծոյլ կեանքին վարժուած ըլլալով՝ չեն  
ուզեր իրենց սահմանափակ կեանքէն դուրս նետուիլ:  
Այս վարդապետին պէս անոնք ալ կրնան իրենց ազգին  
օգտակար ըլլալ:

ՀԱՄՏՈՒԼԼԱՀ ՍՈՒՊՀԻ ՊԷՅ  
(Թուրք յայտնի մտաւորական)



## ՄԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԴ ԿՈՄԻՏԱՍԻՆ

1921 թ. մարտին, մի առաւօտ ուղեցի Կոմիտասի հետ անցկացնել: Ծառայողի հետ միասին իր սենեակը մտայ: Պառկած էր. վեր ցատկեց, ես էլ իր վզին ընկայ եւ սկսեցի համբուրել իրեն: Նա երեսներս բռնեց եւ փաղաքշական ապտակներ տալով ասաց. «Արի քեզ ծեծեմ»: Յետոյ «նստիր» ասաց. դւ ինքն իր առողջ ու աշխոյժ մարմնով ոտքի մնաց եւ սկսեցինք խօսել:

- Կոմիտաս, - ասացի, - գիտեմ, չափազանց վշտացած ես մարդկանցից, իրաւունք ունես, ես էլ եմ վշտացած, սակայն չի կարելի յաւիտենապէս խոռվել, մենք բոլորս անհամբեր քեզ ենք սպասում:

Սակայն նա բառերի ստուգաբանութիւն եւ փիլիսոփայութիւն էր անում: Նկարչութեան մասին հետեւեալն ասաց. «Պէտք է: Հարկաւոր է միայն լոյս եւ բնութիւն»:

Առաջարկեցի միասին Սեւան գնալ:

- Ի՞նչ անեմ այնտեղ, - ասաց: Էջմիածնի մասին էլ անտարբեր մնաց:

- Գնանք դուրս ման գանք, - ասացի:


- Այստեղ շատ լաւ է, - ասաց: Կեանքի եւ մահուան մասին խօսելիս ասաց, որ մահը գոյութիւն չունի եւ իսկոյն սենեակի դուռը բանալով ասաց. «Սա գերեզման է, ապա ի՞նչ է»: Կոմիտասին հանգստացնելով ասացի. «Գնամ, չձանձրացնեմ»:

«Չէ, եկել ես, նստիր, էլ ո՞ւր ես գնում»:

... Սօսեցի իր աշակերտների մասին, ուրախացաւ որ եկել են Փարիզ սովորելու:

Հարցրի հա՞յ երաժշտութիւնն է լաւ, թէ՞ երոպակա-նը: - «Եղբայր (բարկացած) դուն ուզում ես ծիրանից դեղձի հա՞մ առնել, նա իր տեղն ունի, միւսը՝ իր»:

Հարցրի՝ կ'երգե՞ս: «Այո» ասաց: «Դէ Կոմիտաս ջան,



մի բան երգիր ինձ համար»: «Չէ, հիմա ես ինձ համար եմ երգում եւ այն էլ շատ կամաց»:

Մի կէս ժամ էլ դէսից-դէնից խօսելուց յետոյ յանկարծ խոռվեց, դուռը բաց արաւ ու գնաց երեսը կպցրեց պատուհանի ապակուն եւ էլ չխօսեց: Հագնուեցի մնաս բարեւ ասացի. եւ առանց պատասխան ստանալու դուրս ելայ:

1928 թիւին, երբ Հայաստան էի վերադառնում, մի անգամ եւս այցելեցի Կոմիտասին: Հիւանդանոցի այգում պառկած մտածում էր:

Մազերը բոլորովին սպիտակել էին: Մօտեցայ եւ կէս ժամ գանազան հարցեր տուի, սակայն իմ ոչ մի հարցին չպատասխանեց:

Այդպէս էլ բաժանուեցի նրանից:

ՓԱՆՈՍ ԹԷՐԼԷՄԷՉԵԱՆ

## ԵՐԲ ՄԵՐ ԱԶՔԵՐԸ ԲԱՑԻՆՔ...

Սենք շտեանք քեզ, ո՛վ սուրբերուն ամէնէն արուեստագէտն ու արուեստագէտներուն ամէնէն սուրբը: Մենք շլսեցինք քու փառաւոր ճայնդ, որ մինչեւ այսօր քանդակուեր մնացեր է ականջներուն մէջ բոլոր անոնց որոնք ունեցեր են բախտը քեզ լսելու: Երբ մենք բացինք մեր մանկունակ աչքերը, ի սպառ մարած էր քու ոսկի ճայնդ, քէն ըրած էիր մարդկութեան եւ կոնակ էիր դարձուցեր անոր: Սեւը նստած էր ուղեղիդ վրայ, վանելով հոնկէ ինչ որ կար իբրեւ լոյս, իբրեւ երգ եւ ցնծութիւն: Կ'ապրէիր եւ մեռած էիր:

Ու երբ բացինք մեր իմացականութեան աչքերը օր մը, Հայ ապրումի սրբազան բեմին վրայ տեսանք որ կռունկ մը կը թռչտէր, զարնելով յոգնատանջ թեւեր իր կորսուած երամին ետեւէն: Մեր զարմացկոտ աչքերուն տակ օր մը յանկարծ բամբ հոռովել մը բարձրացաւ Հայ գեղարուեստի արգասաբեր դաշտին վրայ: Բացուեցաւ զարունը, վերադարձաւ պանդուխտը եւ պայթեցաւ երգն ու ցնծութիւնը: Գտանք ու ճանչցանք քեզ, Կոմիտաս: Մեռած էիր ու կ'ապրէիր:

Եւ այսօր, ահա՛, կը փառաւորենք քեզ, ո՛վ մեծ Կոմիտաս, դո՛ւն որ Աստուածորդիին նման ծնունդ առիր, ստեղծեցիր, սորվեցուցիր ու խաչուեցար: Կը հասնի՞նք քեզի միլիոններու ճայները որոնք աշխարհին չորս ծագերուն վրայ անկիւն մը գտան ոգեկոչելու համար քու խնկելի յիշատակդ: Թախի՞՞՞ կայ տակաւին քու քարացած շրթներուդ վրայ, թէ՛ ոչ այլեւս լուսաւոր ժպիտ մը՝ երանութեան եւ երջանկութեան:

Մեծով պգտիկով, մեր ամբողջ հոգիովն ու սիրտովը կը փառաւորենք քեզ, Մեծ Վարդապետ եւ քեզի կը մատուցանենք ահա՛՛ երախտագիտական մեր փունջը: Ընդունէ՛ զայն եւ աննշան տեղ մըն ալ անոր բաց քու անսահման հոգիիդ մէջ:

## ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ՝

ՀԱՅ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ

• ... Հայ երաժշտութիւնը ոչ միայն մեղկ ու տխուր չէ, այլ համակ ուժ է եւ կենդանութիւն ու իր մէջ կը սնուցանէ փրկիսփայլութիւնն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետեւ երաժշտութիւնը ամէնէն մաքուր հայելին է ցեղին, ամէնէն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտայայտութեանց մէջ, - կենդանի, - որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ, - որքան ուժեղ է ժողովուրդը:

• Շինականն այն կախարդ վարպետն է, որ կարողմ է հարազատօրէն բնութիւնը, ստեղծում բազմաբեղուն մտքեր, նոցա փչում է հզօր ու պարզ շունչը, դրոշմում իր բնաւորութեան հակնով՝ ներքին եւ արտաքին լրիւ կեանքով եւ կնքում է բառերով ու եղանակով իր հարազատ զաւակը գութաւնները:

• Հայ ժողովրդական երգերը դաշնակելուց առաջ պէտք է քաջ հմուտ լինել Հայ ժողովրդի պատմական, բնական եւ ազգային պայմաններին, եղանակի կազմութեան, ոգուն, ոճին, բառերի իմաստին, մեր ժողովրդական տաղաչափութեան, ժողովրդի երգեցողութեան եւ արտասանութեան հանգամանքներին...:

• Պէտք է մեծ զգացողութեամբ եւ սրբութեամբ հաւաքենք մեր ժողովրդական երգերն ու պարերաները, որոնք բոլորովին այլ եռանդ, այլ զգացմունք եւ այլ միտք են պարունակում, քան միւս արեւելեան ազգերինը:

# Կ Ո Մ Ի Տ Ա Ս

Դու սրբակաթ հոծ երգերու մասունքին մէջ յաւէ՛տ կաս,  
Հոգիներու հաղորդութի՛ւն, երգի նշխա՛ր, Կոմիտաս:

Ոսկեհանգոյց հիւսկէնին մէջ, գեղջկական ջի՛նջ տաղերուն  
ժողովո՛ւրդն է՝ որ կը հանգչի, պարզո՛ւկ կեանքով՝ Կոմիտաս:

Կը հանգչի հոն՝ սո՛ւրբ վաստակով ու սէրերովն իր անհո՛ւն  
Անոր ժպտին, անոր երգին՝ Դու մօտիկն ես՝ Կոմիտաս:

Հնձուորներու հոյլերուն՝ քրտինքովն յորդ՝ երբ բարձրանայ  
Խուրձերու դէզն ոսկեսլաք, կա՛լին մէջ ես՝ Կոմիտաս:

Ու կալի երզն այնքա՛ն թովիչ, հոգեզուարճ կը հնչէ  
Երգերուն հետ արտոյտներուն՝ Դու օրհներգա՛կ Կոմիտաս:

Մշակին հետ սեղան նստած՝ երբ կը բաժնես հա՛ցն արդար,  
Իր հոգիէն քաղուած երգին՝ Դո՛ւ ձայն կու տաս Կոմիտաս:

Երբ գեղջկուհին կուժն իր ուսին՝ ելլէ՛ սարերն հերարձակ  
Չորս հովերէն մեզ կը բերես՝ ահուզարն իր՝ Կոմիտաս:

Մարալ ջանի, Սօնա Եարի, Նազաններու սէ՛րն համակ  
Հո՛ւր ու կրա՛կ, հոգու ճրագ՝ կը պատմես մեզ, Կոմիտաս:

Աղբիւր երթի թափօրներէն՝ պարերգ, ցնձերգ երբ հոսին,  
Որպէս ծաղիկ՝ Դո՛ւ կը քաղես, փո՛ւնջ կը կազմես, Կոմիտաս:

Ամէնո՛ւր միշտ, սիրակարօտ՝ գիւղի երգով Քե՛զ կը կանչենք,  
Եր՛գի մշա՛կ, երգի բանո՛ւոր, մեր պանծա՛լի Կոմիտաս:



# Կ Ո Մ Ի Տ Ա Ս

«Այս ֆակտագիրն ի՞նչ սել է, Աստուած»

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

Ա.

Երանի թէ՛

կուրանայիր-Պատն ալ կոյր էր Կոմիտա՛ս  
խլանայիր զերդ Պէթհո՛վէն-Կոմիտաս  
ծերանայիր Վերտիի պէս, Կոմիտաս

Ու մեզի

փոխանակ ըստ Մատթէոսի՝ Յիսուսի  
հայոց ազգին զրկանքները պատմէիր դուն  
վկայացած Կոմիտասի համաձայն  
Իններորդի Ուրախութեան Զօնին տեղ  
առաջինովդ ու վերջինովդ երգէիր լոկ սար-  
սափումի ողբը մեծ  
Հոգեհանգիստ կամ ի վերին յօրինելու առըն-  
թեր

Յաղթանակի եւ յարութեան քայլերդ բամբ  
որոտագին շեփորէիր աշխարհի

Կամ գոնէ՛

Մոցարթի պէս վաղամեռիկ ըլլայիր  
Դուն երկու հեղ մահանալէ ազատէիր-մենք  
կրկնակի սգալէ:

Բ.

Ո՛չ Պետրոսին, ո՛չ Միսաքին  
Ո՛չ Զօհրապին, ո՛չ Սեւակին  
Կոմիտասին, Վարուժնակին  
Այլ բովանդակ հայոց ազգին

Ճակատագիրն այսպէս գրուեր է կարծես -

Մուր դժոխքի-արիւն բուխ-թել չղջիկի-փե-  
տուր դելի

Ինչ սատանի մատ որ է

Սեւ է դրեր, ցաւ է գրեր մեր ճակտին:

Գ.

Մենք բան մը երբ ունեցեր ենք, անոր յարգը չենք  
գիտցեր

Հոգ չենք տարեր-ան կորսուեր է սպառ  
Այն ատեն մենք հասկցեր ենք արժէքն անոր-աւաղեր  
Ափսոսացեր, լացել, կոծեր, ու պաշտեր ենք զայն  
այնպէս

Որ մոռցեր ենք մեր ունեցածն՝ ու մնացածն անտեսեր  
Մինչեւ անոնք ալ կորսուեր ու յանկերգն է նորէն  
ծայրէն սկսեր:

Իսկ երբ բաներ մ'ունեցեր ենք եւ անոնց յարգն ալ  
գիտցեր


Բարակ ախտին կամ չար բախտին

Զոհ են գացեր վաղաժամ

Ողբուկոծի նոյն եղանակն անոնց վրայ է դարձեր...

Հիմա կը զգանք յարգն ամէնուն-եղածին ալ, չեղածին  
ալ-բոլորի՛ն

Կորսուածին, մնացածին արժէքը լա՛ւ գիտենք մենք



Ճակտի գիրն ալ սրբելու դեղն հրաշագործ գտեր ենք  
մենք-քրտինքո՛վ  
Բայց տակաւին կը վարանինք ձայնապնակն հին ու  
տխուր կոտրելու...

Դ.

Որովհետեւ  
Լեռներու պէս յաւերժօրէն արձանացած մեր դարերուն  
բերքն ես դուն  
Ոտքի կոխան կուրծքի վահան ճակտի խորան մեր  
քարերուն երգն ես դուն  
Յոյսի տենչով լոյսի կանչով յորդած սրտի մեր  
լարերուն վէրքն ես դուն

Ե.

Կ եանք մը ամբողջ՝ քնարակերտ ու խաչազարդ  
խնկարան  
Ո լորածուփ աղօթքներու եւ երգերու հոտեան .  
Մ ենութեան մեծ սալին վրայ կոռած հանճար տեսլա-  
խանձ  
Ի մացումի եւ յայտնութեան հրաժայթքում համա-  
փիւռ,  
Տ առապանքովն հայրենական վարարած գետ սիրայորդ  
Ա ստուածահաս աղաղակի վերարձակ նետ հայապանծ  
Ս արակուտակ կարօտներու սփոփահոս լուսաղբիւր...

15.10.1969

ԶԱՐԵՆ ԽՐԱԽՈՒՆԻ

# ՂՕՂԱՆՋ ԹԱՂՄԱՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Դո՛ւ-Վարդապե՞տ:  
Դու Ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես,  
Դու մեր երգի Մեսրոպ Մաշտո՛ց,  
Գիրն ու տառն ես Հայոց Երգի:

Հայոց երգի  
Անձիր հերկի

Ե՛լ աղօսն ու խորունկ առն ես,  
Ե՛լ մատնընտիր սերմը նրա,  
Ե՛լ խոստումը գալիք բերքի...  
Ե՛լ ծիրանի մեր այն ծառն ես  
Որ ինչքան էլ ճղակոտոր  
Շտկուել է եւ բար բարտուել  
Ու... մեր դարդը իրար տուել...

Դու՛ մեր տաւիղ,  
Եւ քո լարը

Մինչեւ անգամ եւ հատուելիս  
Հայերէն է նորից ճնգում:

Դու՛ մեր սրտի ձայնալարը,  
Մինչեւ անգամ վհատուելիս  
Հայերէն ես դարձեալ տնքում...

Դու ես քարը  
Եւ սրտաբաշ մեր պատշարը,  
Հացը օրուայ  
Եւ նեղ ժամի մեր պաշարը  
Մեր փակ հոգին, բաց աշխարհը,  
Սրբագործուած մեր նշխարը:

Եւ մեր ճարը  
Օտարամուտ ախտի դիմաց.  
Խնկածաւալ մեր տաճարը՝  
Օտարահոտ՝ աղտի դիմաց.  
Մեր երգերի Մովսսարը  
Ու բիւրական աղունքն ես մեր,

Մեր արտոնուած հաւքի լեզուն,  
Մեր կարօտած Փիղան եարը,  
Մեր լեփլեցուն հոգիների ձայնատարը,

Մեր երգերի խազը, նոտան-ձայնատա՛նը,  
Ձայնասփի՛ւռը... կենդանի  
Ու ձայների թանգարանը,-  
Մեր հայկական երգարանը...

Արտը մեզնից դու ես մաճկալ,  
Յարդը մեզնից՝ ցորենը յդու,  
Հարթը մեզնից՝ կատար դու սէգ-  
Լուրթը մեզնից՝ երկինքը դու,  
Շուրթը մեզնից՝ դու համբոյրը,  
Յուրտը մեզնից՝ իսկ դու կրակ,

Իսկ դու օճախ,  
Իսկ դու թոնիր...

Եւ մեզանից արդ ընդունիր  
Երախտիքի այս խաչքուռը,  
Այս խաչքուռը քո՛ իսկ հերկի:

Ընդունիր դո՛ւ, դո՛ւ մեր երգի  
Մշտահնչիւն նուագարան.  
Ընդունիր դո՛ւ մեր ցանուցիր  
Մասունքների հաւագարա՛ր  
Դու՛ խազերի մեր քերական,  
Դու՛ հոգեւոր մեր շարական.  
Դու՛ սրբազան մի աւագան,  
Որ մեր հոգին ախտահանեց.  
Դու մեր կարօտ ու մեր մորմոք,

Մեր տաղի քուրմ,  
Մեր խաղի մոգ,  
Մեր մշտահունչ ու մշտարթուն,  
Անլուելի զանգակատո՛ւն...

(ՀԱՏՈՒԱԾ «ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ»-էն)

ԷՍ ԳԻՇԵՐ

*mf*

էս գիշեր լուսնակ գիշեր,  
 Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,  
 լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,  
 Զիւնն եկեր, գետին նախշեր:  
 Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ,  
 Ով մոռանայ՝ ջուխտ աչքերով կուրանայ:  
 Թուշդ դէմ արա՛ պաշեմ,  
 Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,  
 լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,  
 Կեռ ունքեր, սիրուն աչեր:  
 Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ,  
 Ով մոռանայ՝ ջուխտ աչքերով կուրանայ:  
 Ա՛յ գիշեր, դարձի՛ր տարի,  
 Հացըս թող լինի գարի,  
 Մենակ եարըս ինձ համար,  
 Սրտով խօսքը կատարի:  
 Ա՞ղջի, քու չարը տանեմ,  
 Բու սիրուդ ինձ կը սպանեմ,  
 Դու իմ խօսքին ականջ դիր,  
 Ես մօրըդ հաւան կ'անեմ:

Էս գիշեր լուսնակ գիշեր,  
 Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,  
 լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,

Զիւնն եկեր, գետին նախշեր:  
 Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ,  
 Ով մոռանայ՝ ջուխտ աչքերով կուրանայ:  
 Թուշդ դէմ արա՛ պաշեմ,

Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,  
 լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛,  
 Կեռ ունքեր, սիրուն աչեր:

Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ,  
 Ով մոռանայ՝ ջուխտ աչքերով կուրանայ:

Ա՛յ գիշեր, դարձի՛ր տարի,  
 Հացըս թող լինի գարի,  
 Մենակ եարըս ինձ համար,  
 Սրտով խօսքը կատարի:

Ա՞ղջի, քու չարը տանեմ,  
 Բու սիրուդ ինձ կը սպանեմ,  
 Դու իմ խօսքին ականջ դիր,  
 Ես մօրըդ հաւան կ'անեմ:



ԿԱՔԱԻԻ ԵՐԳԸ

♩ = 126

Արե բացւեց թուխ ամօթօրէն, կաքաւ թրուաւ կանանչ սարէն,  
 կանանչ սարէն, սարի ծէրէն, քաքաւ թրուաւ ծաղիկնսրէն.  
 սիրու՛նք, սիրու՛նք, սիրու՛նք, նախշուն կաքաւիկ,  
 սիրու՛նք, սիրու՛նք, սիրու՛նք, նախշուն կաքաւիկ:

Արե բացւեց թուխ ամպերէն,  
 Կաքաւ թրուաւ կանանչ սարէն,  
 Կանանչ սարէն, սարի ծէրէն,  
 Բարեւ բերաւ ծաղիկներէն:  
 Սիրունի՛կ, սիրունիկ,  
 Սիրունիկ, նախշուն կաքաւիկ:  
 Քու բուն հիւսած ծաղիկներով,  
 Շուշան, նարկիզ, նունուֆարով,  
 Քու տեղ լըցւաց ցօղ ու շաղով,  
 Քրնես-կ'ելնես երգ ու տաղով:  
 Սիրունիկ, եւն.:

Քու թեւ փափուկ ու խատուտիկ,  
 Պըզտի կտուց, կարմիր տոտիկ,  
 Կարմիր կարմիր տոտիկներով,  
 Կը շորորաս ճուտիկներով:  
 Սիրունիկ, եւն.:

Երբ կը կայնիս մամոռտ քարին,  
 Սաղմոս կ'ասես ծաղիկներին,  
 Սարեր-ձորեր զըլարթ կ'անես,  
 Դարզի ծովէն սիրտ կը հանես:  
 Սիրունիկ, եւն.:

ԳՈՒԹԱՆԵՐԳ ՎԱՐԱՆԴԱՅԻ

*Leno mf*

Զի՛գ տու քա-ղի- ա՛յ Ե-զը, Ա-րա հո՛-

հո՛- ա՛յ Լուծող մա-ղի ա՛յ Ե-զը, Ա-րա

հո՛- ա-րա հո՛-

ա-րա հո՛- ա-րա հո՛-

Զի՛գ տու, քաղի՛, ա՛յ եզը,  
 Արա՛ հո՛, հո՛, արա՞, հո՛,  
 Լուծող մաղի, ա՞յ եզը,  
 Արա՛ հո՛ հո՛, արա՛ հո՛,  
 Աստուած պահէ քու տէրը,  
 Արա՛ հո՛, հո՛, արա՛, հո՛,  
 Մինն էլ տաղի, ա՛յ եզը:  
 Արա՛ հո՛ հո՛, արա՛, հո՛:  
 Մեր գութանը օղած ա,  
 Եզանց ուսը նօթած ա,

Վարէ՛ վարը, ա՛յ գութան,  
 Հագիւ խոփը գօղած ա:  
 Շողքըն ընկաւ ծրմակին,  
 Աստուած կը տայ մըշակին.  
 Սուր գութանը ծիր գընաց,  
 Տէր-մըշակը քամակին:  
 Սերմէ՛, սերմէ՛, ա՛յ մըշակ,  
 Սո՛ւրբ ա, սո՛ւրբ ա քու փեշակ.  
 Մինը հագա՛ր տուր, Ա՛ստուած,  
 Քեզ ձէն կը տան տէր-մըշակ:

ՀՈՎ ԱՐԷՔ

*mf*  
 հով ա—րէք սա—րեր ջան հով ա—րէք.

*P*  
 իմ գար—գին գար—ման ա—րէք:


*P Piu mosso*  
 Սա—րե—րը հով չեն ա—նում...

*mf*  
 իմ գար—գին գար—ման ա—նում:

*P*  
 Ան—դեր ան—դեր մի քիչ զով ա—րէք.

*mf*  
*P*  
 վա—րար ան—ջրե թա—ւէք ծով ա—րէք.

*P*  
 զէջ մա—ր—դու օր—... ա—րե—ր



Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,  
 Իմ դարդին դարման արէք:  
 - Սարերը հով չեն անում,  
 Իմ դարդին դարման անում:  
 Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ զո՛վ արէք,  
 Վարար անձրեւ թափէք, ծո՛վ արէք,  
 Գէշ մարդու օր-արեւը  
 Սեւ հողի տակով արէք:  
 Հո՛վ արէք, ամպե՛ր ջան, հո՛վ արէք,  
 Իմ դարդին դարման արէք:  
 - Ամպերը հով չե՛ն անում,  
 Իմ դարդին դարման անում:  
 Սարե՛ր, ձորե՛ր, դաշտեր ու ջրեր՛ը,  
 Մարմանդ մարմանդ վազող աղբիւրնե՛ր,  
 Մի վե՛ր կացէք, իմացէ՛ք,  
 Տեսէ՛ք իմ սրբո՞ւի ցաւեր:  
 Հով արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք:  
 Իմ դարդին դարման արէք:  
 Սարերը հով չեն անում,  
 Իմ դարդին դարման անում:

ՏՐԼԷ ԵԱՄԱՆ

Տր-լէ եա-ման, ա-րեն... ա-ռեր... վա-նայ...

ծո-վին... Տր-լէ եա ման, ես քեզ սիր-րի...

աղ-նան հո-վին, եա-ման եաման հէյ--- եա-ման-- եա-ման հէյ--

Տրլէ եաման. Արեն առեր  
վանայ ծովին,

Տրլէ եաման. Ես քեզ սիրի  
Աշնան հովին,  
Եաման, եաման, հէ՛յ:

Տրլէ եաման. Վարդ բացուեցաւ  
Քաղեւ չը կայ,

Տրլէ եաման. Եարս բարակ էր,  
Սեղմել չը կայ:  
Եաման, եաման, հէ՛յ:

Տրլէ եաման. Լուսինն ելաւ  
էս գիշերին,

Տրլէ եաման. Եարրս տեսայ  
Կէս գիշերին,  
Եաման, եաման, հէ՛յ:

Տրլէ եաման. Արի երթանք  
Սարն ի սէյրան,  
Տրլէ եաման. Քեզ տանողի  
Տընիկ վերան,  
Եաման, եաման, հէ՛յ:

Տրլէ եաման. Եարս պզտիկ է  
Սիրել չը կայ,

Տրլէ եաման. Շատ խորոտ է  
Պաշեւ չը կայ,  
Եաման, եաման, հէ՛յ...

ՍԱՐԵՐԻ ՎՐՈՎ ԳՐՆԱԳ

*P*  
Սա-րե-րի վ-րով գր-նաց նա-ր... նա-ր:

*PP Cresc.* *f decresc.*  
Ա-րտով ա-րո-տով նա-րիս կա-րո-տով:

*Vivo mf*  
էս հի-ղեր լու-ար տե-սայ ն-րի ն-րի ն-րի ջան. ն-րի ջան.  
հմ եւ-րը դու-նը տե-սայ, ն-րի մա-րաւ ԼՍ ջէ) րան.

Սարերի վրով գրնաց,  
Եա՛ր, եա՛ր,  
Արտով, արտով,  
Եարիս կարտով.

Չեռնէս թրռնելով գրնաց,  
Եա՛ր, եա՛ր,  
Մընացիր, մընացիր,  
Զինուոր գընացիր:

Իմ եարը խրռով գրնաց,  
Եա՛ր, եա՛ր  
Մընացիր, մընացիր,  
Զինուոր գընացիր:

Ծաղիկ էր հոտով-մոտով,  
Եկաւ, անցաւ իմ մոտով,  
Աչքըս տեսաւ՝ սիրեցի,  
Ու մնացի կարտով:

Ո՛չ լոր ելաւ, ո՛չ կաքաւ,  
Եա՛ր, եա՛ր,  
Արտով, արտով,  
Եարիս կարտով.

Շէկ եարիս գրրի ճամբան,  
Ափսո՛ս, չասի իրան բան,  
Ճամբին օգնական չունի,-  
Սուրբ կարապետ պահապան:

ՀԱՐԸՐԲԱՆ

Տղայ  
Հարրրբա՛ն.  
Ա.Ղ.Ջ.Ի.Կ  
Ջա՛նէ ջա՛ն.  
ՏՂԱՅ

Սիրել եմ սերն երեսին,  
Անթառամ թերն երեսին,  
Ով իմ սիրածն ինձ չի տայ,  
Աստրծու կերն երեսին:

Ա.Ղ.Ջ.Ի.Կ  
Հարրրբա՛ն.  
ՏՂԱՅ  
Ջա՛նէ ջան.

Ա.Ղ.Ջ.Ի.Կ

Սարի թըրթընջուկ թագա,  
Մեղր ու շաքար քեզ մագա,  
Ինձ պէս նազանի աղջիկ,  
Քեզ պէս տըղին ո՞նց սագայ:

ՏՂԱՅ

Պզտիկ աղջիկ, համ ունիս,  
Չորեքդիմաց ծամ ունիս,  
Խունջիկ-մունջիկ մի՛ անի,  
Ինձ առնելու կամ ունիս:

Ա.Ղ.Ջ.Ի.Կ

Գութանըդ հոլա՛, հոլա՛,

Գութանիդ տակը քոլ ա,  
Բանի՛ գըժութիւն անես,  
Քեզի առնողը տոլ ա:

ՏՂԱՅ


Ձեր տան տակին վար կանեմ  
Ձար ագուալին քար կանեմ,  
Թող իմ սիրածն ինձի տան,  
Գրժութիւնըս թարկ անեմ:

Ա.Ղ.Ջ.Ի.Կ


Ջուրը իր ճամբող կ'երթայ,  
Յողածը վարդի թերթ ա,  
Ինձ սիրող կըտրիճ տըղէն,  
Հագարի մէջ մի բերդ ա:

ԿՈՒՓՆ ԱՌԱ


Naturale



Կուժն առայ ելայ սարը,



Շր - գր - սայ Ֆի - սան եա - րը,  
*con calore*



Ֆի - սան եա - րը ինչ սր - լե՛խ, Շր -



- ֆա - շե՛մ ահ ու զա - րը:

Կուժն առայ, ելայ սարը,  
Չըգտայ Ֆիտան եարը,  
Ֆիտան եարը ինձ տրւէք,  
Չըքաշեմ ահ ու զարը:

Մեծ սարի հովին մեռնեմ,  
Շէկ տրդի բոյին մեռնեմ

Մի տարի ա չեմ տեսել,  
Տեսնողի աչքին մեռնեմ:

Բլբուլը դարի թառի վրայ,  
Խընձորը ծառի վրայ,  
Սիրած սիրածի տային,  
Չոր գետնի՝ քարի վրայ:



ԱՄՊԵԼ Ա

*P*

Ամպել ա, ճուև չի՛ գալի, Շողե՛ր ջան,  
 սարիցը տուն չի՛ գալի, Շողե՛ր ջան,  
 դու ըն - րո - րա՛, դուև օ - րօ - րա՛, Շողե՛ր ջան,  
 ամպի տակին ճուև կե - րեւայ, Շողե՛ր ջան:  
 դու ըն - րո - րա՛, դուև օ - րօ - րա՛, Շողե՛ր ջան,  
 ամպի տակին ճուև կե - րեւայ, Շողե՛ր ջան:

Ամպել ա, ճուև չի՛ գալի,  
 Շողե՛ր ջան,  
 Սարիցը տուն չի՛ գալի,  
 Շողե՛ր ջան.

Դու ընրորա՛, դուև օրօրա՛,  
 Շողե՛ր ջան,  
 Ամպի տակին ճուև կեւրեւայ.  
 Շողե՛ր ջան.

Սիրտըս կըրակով լցած,  
Շողե՛ր ջան.

Աչքերիս քուն չի գալի,  
Շողե՛ր ջան.

Դու շորորա՛, դուն օրորա՛,  
Շողե՛ր ջան.

Ամպի տակին ձուն կ'երեւայ,  
Շողե՛ր ջան:

Հուրք ա թափում վերիցը,  
Ես վառայ քո սերիցը,  
Վարդավառին ինձ համար  
Ձուն բեր դու սարերիցը:

Սարի գըլխին ձուն եկաւ,  
Շողե՛ր ջան.

Շեկլիկ եարըս տուն եկաւ,  
Շողե՛ր ջան.

Ուն կ'երեւայ, ձուն կ'երեւայ,  
Շողե՛ր ջան.

Բերդի տակին տուն կ'երեւայ,  
Շողե՛ր ջան.

Դեռ մուրազիս չըհասած,  
Շողե՛ր ջան.

Վըրէս խորունկ քուն եկաւ,  
Շողե՛ր ջան.


Ուն կ'երեւայ, ձուն կ'երեւայ  
Շողե՛ր ջան.

Բերդի տակին տուն կ'երեւայ  
Շողե՛ր ջան:




Աչունն եկաւ սարիցը,  
Տերեւ թափեց ծառիցը.  
Շողոն դարդով լըցւել ա,  
Հեռացել ա եարիցը


ԻՆՉՈ՞Ւ ԲԻՆԳԵՕԼԸ ՄՏԱՐ




ինչո՞ւ ֆինգեօլը մը տար Բաղի բիւլ-բիւլ-ը Գը տար  
ինչո՞ւ կարոյին առար, անտէր ու գե՛րի Դառար




Տըլէ մը կոնտէ, Ա-բօն թըխ կոնտէ, Տըլէ մը կոնտէ



Թըխ կոն Թըխ կոն Թըխ կոն տէ, Ա-բօն կոն տէ Թըխ կոն տէ:



Սուսամ սիւմբիւլ, Բաղի բիւլ-բիւլ Բաղի բիւլ-բիւլ:



ինչո՞ւ ֆինգեօլը մը տար, Բաղի բիւլ-բիւլ-ը Գը տար:

Ինչո՞ւ Բինգեօլը մը տար,

Բաղի բիւլբիւլը Գը տար:

Ինչո՞ւ Կարոյին առար,

Անտէր ու գերի դառար:

Տըլէ, Մըկօն, տէ,

Արո՞ն Թըխկո՛նտէ:

Թըխկո՛ն, Թըխկո՛ն, Թըխկո՛ն, տէ,

Արո՞ն կո՛նտէ, Թըխկո՛նտէ.

Սուսամ սիւմբիւլ,

Բաղի բիւլբիւլ:

Ինչո՞ւ Բինգեօլը մը տար,

Բաղի, բիւլբիւլը Գը տար:

ԳԱՐՈՒՆ Ա

Գա - րուն ա, ջուն ա ա - րել,  
 Իմ եարն ինչ - նից ա սա - ուել:

վա՛յ, լե, լե, վա՛յ լե, լե,  
 Ա՛խ, շոր - նայ վա՛խ, ա՛յ եար,

վա՛յ, լե, լե, լե, լե:  
 Շար մար - դու լե - րուն:

վա՛յ, լե, լե, վա՛յ, լե, լե,  
 Ա՛խ, շոր - նա վա՛խ, ա՛յ, եար,

վա՛յ, լե, լե, լե, լե:  
 Շար մար - դու լե - րուն:

Գարուն ա, ձուն ւ արել.

վա՛յ, լե, լե, վա՛յ, լե, լե,  
 վա՛յ, լե, լե, լե, լե:

Իմ եարն ինձնից ա սառել:

Ա՛խ շորնա՛յ, վա՛յ, ա՛յ եար,  
 Չար մարդու լեզուն:  
 Բամին փչում ա պաղ-պաղ,

Լերդ ու թոքս անում ա դաղ:

Եա՛ր, ինձ բեմուրաղ արիր,  
 Սէրը ինձնէ զատ արիր:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ  
ՄԱՀՈՒԱՆ ՅԻՄՆԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Գնալը Կղզիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ

14 Սեպտեմբեր 1985, Շաբաթ ժամը 16.00-ին  
Նախագահութեամբ

ԱՄԵՆ. Տ. ՇՆՈՐՀՔ Ս. ԱՐՔ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ  
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԲԻՈՑ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐԳԵՐԷՆ ՓՈՒՆՋ ՄԸ  
ԳՆԱԼԸԻ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ  
ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ  
ՕՐԴ. ԱՐՓԻ ՊԻԼՊԻԼԻ

ԹՈՒՐԲԻՈՑ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ  
«ՇՈՂԱԿԱԹ» Մատենաշար, Յուշամատենի թիւ 8

ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ  
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Կողքի նկար՝  
Անուանաթերթ՝

ԷՐՕԼ ՍԱՐԱՑԵԱՆ  
ՊԵՐՃ ԷՐՉԵԱՆ  
(Ինչպէս նաեւ նախկին  
զրբոյկին նոյն բաժինը)

Ֆիլմերու  
պատրաստութիւն՝  
Էջաղրութիւն՝  
Տողաշարում եւ  
Տպագրութիւն՝

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊՕՅԱՃԵԱՆ  
ԳԷՈՐԳ Պ. ՅԱԿՈԲԵԱՆ  
ՄՈՒՐԱՏ ՕՅՍԷԹ ՏՊԱՐԱՆ

TÜRKİYE ERMENİLERİ PATRİKLİĞİ  
ŞOĞAGAT YAYINLARI NO.8

GOMİDAS VARTABET SOĞOMONYAN'IN  
ÖLÜMÜNÜN 50. YILDÖNÜMÜ



Dizgi ve Baskı  
MURAD ÖFSET  
İSTANBUL  
1985

